Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

ESN
Erasmus Student Network
Yerevan

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԵՆԹՈՐՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության կրթաթոշակային ծրագրի ներքո: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում հեղինակը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 Նախաբան 3
- Ուղեցույցի նպատակ 3
- Ուղեցույցի օգտակարությունը 3
- Մեթոդաբանությունը 4
  - Գրականության ուսումնասիրություն 4
  - Շահառուների հետ հարցազրույցներ 4

2 Ո՞վ է մենթորը 4

3 Ո՞վ է մենթին 4

4 Եվրոպական համերաշխության կորպուս 5

5 Էրազմուս+ Միջազգային կրեդիտային շարժունություն 5

6 Ինչպե՞ս դառնալ մենթոր 6

7 Կարծիքներ 9

8 Շնորհակալական խոսք 10

ՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հեղինակ: *Նենսի Մկրտչյան*

Դիզայներ: *Մարինե Դավթյան*

Խորհրդատու: *Աննա Եղոյան*

Թարգմանիչ: Էլեոնորա Սարգսյան

ՆԱԽԱԲԱՆ

1.1. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

«Միջազգային կամավորների և ուսանողների մենթորների ուղեցույցի» նպատակն է հավաքագրել լավագույն փորձառություններն ու աջակցել մենթորներին իրենց մենթորության ընթացքում, երբ հյուրընկալում են միջազգային կամավորներին և ուսանողներին իրենց համալսարանում, կազմակերպությունում և ընդհանրապես համայնքում: Հավելելով այս ամենին, նման նյութերի պակաս կա, հատկապես հայերենով: Թեև Ուղեցույցը պարունակում է ընդհանուր խորհուրդներ, հարկ է նշել, որ այն մշակվել է Հայաստանի և Արևելյան գործընկերության երկրների փորձի համատեքստում: Վերոնշյալ շահագրգիռ կողմերը պետք է շահագրգռված լինեն ծրագրերից (Էրազմուս +-ից կամ Եվրոպական համերաշխության կորպուսից) վերադարձող շահառուներին որպես պոտենցիալ մենթորներ ներգրավելու մեջ, իսկ մյուս կողմից մենթորներին հնարավորություն է տրվում կամրջել ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի ընթացքում ձեռք բերած իրենց փորձը պոտենցիալ մենթիների հետ: Այսպիսով, սա ոչ միայն մենթորների և մենթիների, այլ նաև վերջիններիս ու շահագրգիռ կողմերի միջև փոխշահավետ համագործակցություն է:

1.2. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն նշվեց, ուղեցույցը կարող է օգտակար լինել շահագրգիռ կողմերին ճիշտ ընտրելու մենթորներին և մենթիներին: Ավելին, այս ուղեցույցը ուղղված է անմիջապես ապագա մենթորներին, ովքեր չունեն փորձ, այլ միայն համապատասխան նախադրյալներ՝ մենթիների համար լավագույն մենթորներ լինելու:
Այս ուղեցույցի օգնությամբ մենթորները կարող են տեղեկանալ՝

Ո՞վ է մենթորը:

Որո՞նք են մենթորի հիմնական գործառույթները:

Ովքե՞ր են մենթիները, և ի՞նչ կարիքներ ունեն:

Եվ դեռ շատ հարցեր կան, որոնք կարող են բարձրացվել, և դրանց պատասխանները հնարավոր կլինի գտնել ուղեցույցում:

1.3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.3.1. Գրականության ուսումասիրություն

Մենթորության հնարավորությունների, ծրագրերի հասանելիության և եկած միջազգային կամավորների ու ուսանողների մասին կարևոր տեղեկությունը հնարավոր է եղել հավաքել **Երազմուս ուսանողական երևանյան ցանցի** և իր գործընկերների՝ հասարակական կազմակերպությունների ու համալսարանների շնորհիվ:

1.3.2. Շահառուների հետ հարցազրույցներ

Էրազմուս Ուսանողական ցանցի անդամ կազմակերպությունների հետ հարցազրույցների շնորհիվ վերհանվեցին մենթորության վերաբերյալ լավագույն փորձառությունները: Ցանցը մենթորներին կոչում է ընկերներ (buddy):

*Ո՞Վ Է **ՄԵՆԹՈՐԸ***

Մենթորները հյուրընկալող երկրում միջազգային կամավորներին կամ ուսանողներին աջակցելու հարցում էական դեր են խաղում: Մենթորը կարծես ստվեր լինի. միշտ ներկա է, երբ անհրաժեշտ է, օգնում է պատկերներն իրար միացնել ու տեսնել ավելի լայն հեռանկարներ:[1] Մենթիին կարող է օգտակար լինել իր լոկալ մենթորի անհատականացված ընդունելությունը:

[1] UNCRCPC, "ESC Mentor", The Youth For Hope Blog

*Ո՞Վ Է **ՄԵՆԹԻՆ***

Մենթորը մենթոր չէ առանց մենթիի: Սույն ուղեցուցի շրջանակներում ԵՄ-ի կողմից աջակցվող երկու ծրագրերի մասնակիցներ

Եվրոպական համերաշխության կորպուս

Եվրոպական համերաշխության կորպուսի պորտալն առաջարկում է որակավորման հավաստագիր և դրամաշնորհ այն երիտասարդներին և կազմակերպություններին՝ հնարավորություն տալով գործունեություն իրականացնել և գտնել իրար:
ԵՀԿ ծրագիրը 18-30 տարեկան երիտասարդներին տալիս է իրական կյանքի փորձ օտար երկրում անհատական նվիրվածություն ունենալու երկարաժամկետ կամավորական գործունեության միջոցով: ԵՀԿ-ն կամավորներին հնարավորություն է տալիս ինքնաբացահայտել և ներգրավվել միջմշակութային ուսուցման փորձի մեջ ոչ ֆորմալ կրթական միջավայրում՝ մշակելով անհատական ուսումնառողի ծրագիր՝ Եվրոպայում ճանաչված Youthpass ձևանմուշի միջոցով:

Էրազմուս+ Միջազգային կրեդիտային շարժունություն

Էրազմուս+ Միջազգային կրեդիտային շարժունություն ծրագիրը գործընկեր երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների (ԲՈՒՀ) ուսանողներին հնարավորություն է տալիս ուսանել այլ երկրում: Հայաստանում (գործընկեր երկիր) գտնվող ԲՈՒՀ-ը կարող է իր ուսանողներին ուղարկել ծրագրային երկրի որևի ԲՈՒՀ, և ընդհակառակը:

ԻՆՉՊԵ՞Ս ԴԱՌՆԱԼ ՄԵՆԹՈՐ

Սկզբում մենթորները դիմում են կամ նշանակվում են հյուրընկալող հաստատությունների (համալսարանի կամ կազմակերպության) կողմից հիմնականում կամավոր հիմունքներով աջակցելու իրենց մենթիների ինտեգրմանը և ինֆորմալ ուսուցմանը: Մենթիի հետ առաջին կապը հաստատելով՝ մենթորը հարկավոր է ձևավորի ապահով ու պաշտպանված միջավայր և լինի աջակից, պաշտպան և ուղղորդող: Բայց աստիճանաբար, երբ մենթին ինքնավստահություն ձեռք կբերի և պակաս կախվածություն կունենա ու կդառնա ավելի ինքնավար, մենթորը կարող է ցուցաբերել ավելի վերլուծող, ռեֆլեկտիվ և քննադատական մոտեցում:

Հեշտ չէ անգամ լոկալ ուսանողի կամ ցանկացած այլ մեկի համար մենթոր լինել, շատ ավելի բարդ է այդ մեկը լինել տեղի համայնքում միջազգայինի համար: Կան որոշ խորհուրդներ, որոնք մենթորը կարող է կիրառել իր դերը իրականացնելիս: Մենթորների կոնկրետ դերերը բաղկացած են ընդհանուր քայլերից, որոնք նշված են ներքևում:

1 Պատրաստ եղեք կամավորելու

Մենթորությունը խորհուրդ է տրվում հիմնված լինի կամավորության և միջմշակութային երկխոսության սկզբունքների վրա: *«Տվյալ «ծառայության» առաջնահերթ նպատակն է աջակցություն տրամադրել նոր միջազգային հյուրընկալվող ուսանողներին ընդունող երկրում՝ նպաստելով նրանց այնպիսի հարցերում, ինչպիսիք են՝ հարմարվել ընդունող նոր երկրին, մշակույթին և շրջապատին, ստեղծել ավելի հանգստացնող ու հյուրընկալ միջավայր:»*[2] Նույնիսկ նախքան միջազգային ուսանողի կամ կամավորի ժամանումը ընդունող երկիր, կատարյալ կլիներ կամավորական գործունեություն ծավալել այնպիսի կազմակերպություններում, ինչպիսին է՝ **Երազմուս ուսանողական ցանցը**, միանալ նրանց ընկերների (buddy) համակարգին և կապեր հաստատել ապագա մենթիների հետ:

2 Հիմնեք դրական, անհատական հարաբերություններ մենթիի հետ

Անձը, ով ստանձնում է հյուրընկալվողին ուսուցանելու այս պատասխանատվությունը, պետք է պահպանի կանոնավոր կապ և հետևողական աջակցություն՝ չնայած կապի ձևերին՝ լինեն առցանց կամ անցանց: Մյուս կողմից, մենթորն ու մենթին ցանկալի է շփման սահմաններ դնեն, ունենան հստակորեն արտահայտված փոխադարձ ակնկալիքներ և «չաշխատեն» ամեն օր ու ամեն պահի: Դրանով մենթորները հաստատում են փոխադարձ վստահություն և հարգանք: Հետաքրքրական է, որ այս ճամփորդությունը պետք է հաճելի և զվարճալի լինի երկու կողմերի համար՝ գտնվելու ընթացքում և մենթիի մեկնելուց հետո:

[2] *Adessa Zadia, "The Buddy System", ESN France, 2017-2020,7*

3 Օգնեք մենթիին զարգացնել կամ սկսել զարգացնել կենսական հմտություններ

Երբ միջազգային ուսանողներն առաջին անգամ ժամանում են հյուրընկալող երկիր, նրանք կարող են բախվել որոշ մարտահրավերների, և մենթորը պետք է աշխատի նրանց հետ՝ հասնելու կոնկրետ նպատակներին (բնակության վայր գտնել, բանկային հաշիվ բացել, նոր ընկերներ ձեռք բերել կամ հարմարվել նոր մշակույթին): Այս վճռորոշ ժամանակաշրջանում մենթորները կապի մեջ են լինում տեղի համայնքի հետ ամեն օր, ուստի նրանց, անշուշտ, կխնդրեն օգնել լեզուների թարգմանության և մշակութային սովորույթների ու ձևերի հարցում:

4 Նպաստել մենթիի ինքնուրույն կողմնորոշվելու ու նոր մարդկանց հետ շփվելու ունակությունների զարգացմանը

Ընդհանուր առմամբ, մենթորն օգնում և ուղղորդում է մենթիին ճիշտ ուղղությամբ մտածելու որոշումներ կայացնելու, առաջինն առաջարկներ ներկայացնելու և ասածների մեծ մասն անելու ժամանակ:[3] Կախված մենթորի և մենթիի ունեցած ժամանակից՝ իրենք պետք է ժամանակ տրամադրեն ոչ միայն որոշ վերևում նշված գործնական հարցերի, այլև սոցիալական ու մշակութային միջոցառումների հաճախելու համար, որը, փաստացի, իրենց հաջողության գրավականն է: Օրինակ՝ եթե նույն համալսարանի կամ կազմակերպության մենթորներն ու մենթիները համատեղ հանդիպում կամ միջոցառում իրականացնեն, դա կարող է նպաստել ավելի շատ կապեր ստեղծելուն, այդպիսով մենթիները ավելի ոգևորված կլինեն նոր մարդկանց հանդիպելիս, նոր տեղերում լինելիս ու նոր փորձառություններ ունենալիս:

[3] Michael Kimmig, "Meant to be a Mentor. Workbook for EVS mentors", Warsaw, 2015, 43

ԿԱՐԾԻՔՆԵՐ

Մանե Ճատուրյան

«Մեկի մենթոր լինելը հրաշալի փորձառություն էր: Դա նաև հնարավորություն է սեփական երկրիդ ու մշակույթիդ ավելի լավ ծանոթանալու՝ մենթիին այն ծանոթացնելու ընթացքում: Կարող ես նաև նոր բաներ սովորել ուրիշ երկրների ու մշակույթների մասին, որ փոխանակման ուսանողը բերում է իր հետ: Սա իհարկե մարտահրավերային է, բայց ես երախտապարտ եմ բոլոր տեսակ մշակութային, սոցիալական և քաղաքական փոխանակումների համար, որ ունեցա Մարկոյի հետ»:

Մարկո Հունզիկեր

«Շատ հաճելի է ունենալ մեկին, որ պատրաստ է և կարող է օգնել քեզ փոխանակման կիսամյակի ընթացքում: Չնայած ես հնարավորություն ունեցել էի այցելելու Հայաստան կարճ ժամանակով մի քանի տարի առաջ, այնուամենայնիվ, երկրին լավ ծանոթ չէի: Երբ սկսում էի հայերեն սովորել, Մանեն շատ օգտակար եղավ այն գործնականում կիրառելու հարցում: Մենք նաև շատ լավ ժամանակ անցկացրինք ճանապարհորդելիս ու Հայաստանի գեղեցիկ բնությունը բացահայտելիս»:

Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

ESN
Erasmus Student Network
Yerevan

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Որպես հեղինակ, ցանկանում եմ իմ երախտիքի խոսքն ուղղել Էրազմուս ուսանողական ցանցին և իր անդամ կազմակերպություններին այս ոլորտում իրենց փորձառությամբ կիսելու, ինչպես նաև ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության կրթաթոշակային ծրագրին՝ իրենց աջակցության համար:
Հատուկ շնորհակալություն եմ ուզում հայտնել իմ մենթոր Աննա Եղոյանին մասնագիտական ուղղորդման, գրաֆիկ դիզայներներ Մարինե Դավթյանին ու Վեներա Առաքելյանին ուղեցույցի վիզուալիզացիայի, ինչպես նաև Էլեոնորա Սարգսյանին՝ անգլերենից հայերեն թարգմանությանն աջակցելու համար:

Կառուցի՛ր ապագադ մեզ հետ:

Կապ մեզ հետ

@esnyerevan

esn.yerevan

esnyerevan@gmail.com